

21(596)
17.08.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԵՐԲ ՉԱԼԻՍ Է ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

... Իսկ զայիք սեպտեմբերը թերևս մի քիչ ուրիշ է լինելու: Հիմնականում նույնը կլինեն ուսուցիչներն ու աշակերտները, կլինի տևական բացակայության պատճառով ծնված տաք կարոտ ու տպավորություններով կիսվելու բուռն ցանկություն: Եվ հուսանք՝ դասասենյակներում ուսումնական ողջ տարվա ընթացքում ուրախ կողողանցի դպրոցական զանգը...

Սա միմիայն ցանկություն է, թե՛ վերադասի կողմից հաստատված պլան, որով պիտի առաջնորդվեն ուսումնական հաստատություններում: Ամեն ինչ կախված է մեզմիջ՝ ինչքանով կկարողանանք ճշտագույնս պահպանել համավարակային պայքարի կանոնները: Անցած ամիսներն իսկապես մեզ համար ուսանելի դաս են եղել թե՛ կարգապահության ապահովման և թե՛ դասասերտման արտակարգության առումներով: Գիտենք, որ համավարակի բարդացման դեպքում կրկին կարող ենք հեռավար ուսուցում իրականացնել, բայց օրվա խնդիրը, համաձայնեք, բնականոն ուսումնական գործընթացին վերադառնալն է:

Չթերագնահատելով հեռավար ուսուցման դրական կողմերը, շեշտենք՝ ոչինչ չի փոխարինի մանկավարժ-աշակերտ առողջ և շփուկներին: Աշակերտը պիտի զգա ուսուցչի խոսքի ջերմությունն ու խստությունը, ոգևորվի նրա խրախուսումներով: Շատ կարևոր է, անշուշտ, դասընկերների շոշափելի ներկայությունը ուսումնական առօրյայում, որովհետև նաև կողքինի ստույգ օրինակով են արդյունավետություն ապահովվում:

Կրթությունը դիմամիկ օրգանիզմ է, ուստի կրթական չափորոշիչները փոփոխությունների կարիք միշտ էլ ունեն: Ինչպես մյուս կենսական բնագավառներում, կրթական ոլորտում ևս նոր մարտահրավերներ են ի հայտ գալիս, որոնց դիմագրավելու համար պետք է համախմբել բոլոր ուժերը, իրավասու շրջանակներում քննարկել ներկայացված առաջարկությունները, գտնել լավագույն տարբերակները և դրանք անվերապահորեն կիրարկել: Մենք ունենք ոլորտի խնդիրները ճիշտ հասկացող լավ մասնագետներ հենց գործող մանկավարժների շրջանում: Եթե դարձնենք նրանց ծայրը: Սա այն դեպքն է, երբ տեսականն ու գործնականը պետք է համադրվեն ու իրական արդյունք տան, որովհետև գործընթացի առանցքը մատաղ սերնդի ուսուցումն ու դաստիարակությունն է, ինչը մեր երկրի համար ռազմավարական կարևորագույն նպատակ է:

Վերջին շրջանում ամենատարբեր հանրային հարթակներում բուռն քննարկումներ են ընթանում նոր դասագրքերի կազմման և հարակից խնդիրների շուրջ: Խելացի և օգտակար առաջարկները երբեք էլ ժամանակակիտ չեն լինում, և այս իմաստով «Լուսարար»-ը պատրաստակամ է ամբիոն դառնալու նման առաջարկների համար: Մասնագիտական համապարփակ քննարկումների համար մանկավարժական թերթը լավագույն հարթակն է, մանավանդ որ մեր թերթը հասանելի է հանրապետության բոլոր մանկավարժներին:

Շարքերի անց ուսումնական կյանքը դարձնելու կրկին կենա: Պահպանելով հանրապետության պարետի և կրթական գերատեսչության ղեկավարության կողմից իջեցված պահանջներն ու իրահանգները՝ համակվենք անասհման լավատեսությամբ առ այն, որ կկարողանանք հաղթահարել մեզ պատուհասված հնարավոր դժվարությունները: Չմոռանանք՝ ուսուցիչը միայն ապագա գիմվոր դաստիարակող չէ, նա ինքն էլ մարտնչող գիմվոր է իր մասնագիտական խրամատում: Իսկ հատկապես հայ մարտիկը պարտվելու իրավունք չունի:

Ի՞ գեն, որի անունն է Գիտելիք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՆՈՐ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆԻՆ ՍՊԱՍԵԼՈՎ



ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՆ՝ ԱՆՑՆԵԼՈՎ ԲՈՒՐ ԲԱՅՆԵՐԸ



Շուրջ մեկ ամիս է՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, օրինակելի ծրագրերի նախագծերը: Նախարարությունը մասնագիտական համայնքներին կոչ է արել ծավալել շահագրգիռ և բովանդակային քննարկում, որից ստացած առաջարկությունների, կարծիքների, դիտողությունների հիման վրա չափորոշիչներն ու ծրագրերը կլրամշակվեն ու կհաստատվեն: Հուլիսի 24-ին տված առցանց ասուլիսի ժամանակ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարաբաջյանը կոչ է արել Արցախի մանկավարժներին ակտիվորեն մասնակցել քննարկումներին և իրենց առաջարկությունները ներկայացնել ՀՀ կամ ԱՀ կրթական գերատեսչություններին: Եվ իրոք, թե՛

մայր Հայաստանում և թե՛ Արցախում մանկավարժները սոցցանցերում իրենց նկատառումներն են ներկայացրել: Նկատենք, որ կրթության ոլորտում նման ծավալուն բաց քննարկում հետխորհրդային տարիներին առաջին անգամ է կազմակերպվում: Պետք է ասել, որ որոշ դրական նկատառումներով հանդերձ՝ քննարկումներից ստացված ընդհանուր տպավորությունը մերժողական է: Չխորանալով վեճի նյութ դարձած առանձին առարկաների թեմաների մեջ (այդ բոլորն առաջին օրվանից դրված են սոցցանցերում)՝ փորձենք քննարկումներին անդրադառնալ կազմակերպչական տեսանկյունից: Մեր գրուցակիցը ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն, մանկավարժ Յուրի ՔԱՐԱՍՅԱՆն է:

- Պարոն Քարայան, նախ՝ հետևյալ հարցը. արդյո՞ք պահանջված է նոր չափորոշիչների ընդունումը:

- Ընդհանրապես բարեփոխումները կրթության ոլորտում պետք է մշտապես լինեն: Համակարգը կենդանի օրգանիզմ է, որն ամեն օր փոփոխվում է և պետք է ժամանակահատված լինի: Հանրակրթության յուրաքանչյուր բարեփոխման արդյունքի պետք է սպասել միջնակարգ կրթության տևողության չափ, մեր դեպքում՝ 12 տարի: Չափորոշիչները վերջին անգամ վերանայվել են 15 տարի առաջ, և բնականաբար, խնդիրները շատ են: Կրթության ոլորտում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որից պետք է բխեն մնացած բոլոր փաստաթղթերը: Ընդհանրապես, ցանկացած ոլորտ պետք է ունենա ռազմավարական ծրագիր՝ հայեցակարգ: Ռազմավարություն՝ ինչ ենք ուզում ունենալ տվյալ բնագավառում, որն է մեր նպատակը և այնուհետև մշակել մարտավարություն, թե ինչ գործողություններ պետք է կատարել դրան հասնելու համար: Կրթության ռազմավարական ծրագրից նախ պետք է բխի ամենակարևորը՝ հանրակրթության պետական չափորոշիչը, որը սահմանում է նրա հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելա-

զույն ծավալը, շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները, սովորողների գնահատման համակարգը: Իսկ դրանից էլ արտածվեն առարկայական չափորոշիչները: ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրի նախագիծը՝ նախատեսված մինչև 2030 թվականը, դեռ չի հաստատվել: Նախագիծը հետ է ուղարկվել լրամշակման: Փաստորեն մենք հայեցակարգ չունենք, բայց միանգամից սկսում ենք մարտավարությունը և սկսում ենք ամենից հեշտ մասից՝ առարկայական չափորոշիչներից:

- Հանրակրթության պետական չափորոշիչ քննարկումը կարծես անցավ աննկատ, համեմայն դեպս դրա շուրջ իրարամերձ կարծիքներ չեղան, բայց առարկայականի դեպքում կրթեր են բորբոքվում: Ինչո՞ւ է այդպես:

- Միանգամից քննարկման են դրված հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների նախագծերը, որն իմ կարծիքով ճիշտ է: Պետական չափորոշիչը, որն ավելի կարևոր փաստաթուղթ է, ընդհանրական դրույթներ է պարունակում և փաթեթի ձևով է քննարկվել: Թերևս որոշ անհամաձայնություն է հայտնվել գնահատման համակարգի, մասնավորապես՝ մինչև 5-րդ դասարանի առաջին կիսամյակ աշակերտներին չգնահատելու դրույթի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով, որ գնահատման ներ-

կա համակարգը իրեն չի արդարացնում և փոփոխության կարիք է զգում, ես էլ եմ դեմ աշակերտների չգնահատման դրույթին, քանի որ դա հանվել, և տեղը ոչինչ չի դրվել, թափուր է մնացել: Ինչ մնում է առարկայական չափորոշիչներին, կասեմ հետևյալը. իմ նկատառումով և ընդհանրապես աշխատանքի կազմակերպման իմ փորձից ելնելով՝ խնդիրը լուծելու համար նախ պետք է հաշվարկ անել, թե ում ուժերով պետք է դա արվի. նախարարությամբ, թե՛ մեկ այլ: Նախկինում եղել է Կրթության ազգային ինստիտուտ, որն իրականացնում էր այդ գործառնությունները: Հիմա չունենք մի կենտրոն, որը դա կաներ: Նախարարության աշխատողները պաշտոնյաներ են, որոնք պետական քաղաքականություն են մշակում: Համալսարաններից յուրաքանչյուրը կուզեր, ինչպես ասում են, վերմակը դեպի իրեն քաշել: Եվ չափորոշիչները մշակելու համար ստեղծվել են փորձագիտական աշխատանքային խմբեր: Ցանկացած խնդիր լուծելու համար պետք է հետազոտել: Հասկանալի է, որ պետք է ինչ-որ բան փոխել: Բայց պետք է սկզբում հասկանալ սկզբունքները, թե ինչ ենք ուզում, վերջնարդյունքում՝ ինչ քաղաքացի: Վերցնում են տարբեր երկրների փորձը: Ես համաձայն եմ, այդպես էլ կարելի է: Բայց համաձայն չեմ, որ միանգամից վերցնում և հարմարեցնում են մեզ: Պետք է վերցնել ոչ միայն նրանց փորձը, այլև պրոբլեմները, իմանալ՝ ինչպես են նրանք լուծել դրանք, և մենք էլ է՛ն գլխից լուծենք՝ չսպասելով, որ ծագեն, հետո մտածենք դրանց լուծման ուղղությամբ, այլապես մենք միշտ հանդես կգանք վազելով հետևից հասնողի դեմ: Դրա համար, նորից են կրկնում, պետք է լինի ռազմավարություն, հասկանալ սկզբունքները, և թե որոնք պետք է փոխել:

Բնականաբար, գրոյից չենք սկսում, հիմքը կա: Այդ հիմքը մեր համակարգն է: Չի կարելի ասել, թե մենք կրթություն չունենք: Մենք ունենք չիմացող երեխաներ և իմացող երեխաներ: Չիմացող, բայց՝ ոչ տղետ: Ունենք կրթության հարուստ փորձ. խորհրդային համակարգի, իսկ մինչ այդ՝ 1600-ամյա դպրության անցած ճանապարհ: Այդ փորձը մեր գեներում նստած է, և պետք է օգտագործենք: Եթե ուզում ենք նորը ստեղծել, պետք է օգտագործենք հինը: Տեխնիկական միջոցներն ընդամենը պետք է օժանդակեն, և ոչ թե հիմնվենք դրանց վրա: ➔ 2

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎԻՐՅԱԼԸ



Լևոն Աղյանը պարզևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը օգոստոսի 3-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ հայ գրականության ասպարեզում ներդրած ավանդի համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ անվանի արծակագիր, թարգմանիչ, հրապարակախոս և հասարակական գործիչ

Նրա բացառիկ մարդ լինելը: Խորհրդային տարիներին ապրելով Բաքվում և լինելով «Գրական Արթըն» հանդեսի պատասխանատու աշխատող և խմբագիրը՝ նա ուշադրության կենտրոնում էր պահում Արցախի գրական օջախը, որը շատ կարևոր էր այդ տարիներին: Անձնական ու ամանձնական տառապանք է անցել Աղյանը: Ջարդերի ականատեսն է եղել, վերապրածը դարձրել է վեպ, ու «Յեռավոր եզերք»-ը հենց վավերագրի ճշմարտությամբ ներկայացված ստեղծագործություն է: Վեպի գլխավոր հերոսի՝ հայ Լեոյի և աղբյուրների Ռենայի կերպարներով և նրանց շուրջը հյուսած պատմություններով տրվում է մի ամբողջ ողբերգության նկարագրություն: Նյութը Բաքվի հայության կենսակերպն է, առանցքայինը՝ հայության գլխին պատուհասված աղետը: Վեպը կարելի է համարել քաղաքական դրամա: Հայի էթնիկ ինքնության և թուրք ազայնականության մրցապայքարի դրամա, որն, ավաղ, ավարտվում է մեծ

ջարդերով: Ջարմանալի քնքշությամբ է հեղինակը խոսում Բաքվի մասին, և դա շատ դժվար է: Նա ատելության նշույլ իսկ չի ցուցաբերում: Ատելության ոչ մի տրամադրություն չկա: Եվ սա է, թերևս, վեպի ամենամեծ արժանիքը: Հեղինակի մեղադրանքն ավելի շատ ուղղված է հրահրողների խմբին, ովքեր ամբոխ ձևավորեցին և կառավարեցին այն՝ չերկնջելով արդարության դատաստանից: Իր տեսակի մեջ ես բացառիկ գիրք եմ համարում նրա «Յեռավոր եզերք»-ը: Դա ոճագործության դեմ պարզած հաղթանակ է և կոչ-ուղերձ սերունդներին, ինչի համար երախտապարտ ենք Աղյանին: Քչերը կկարողանան բարձրածայն խոսել վերապրածի մասին: Այսօր շատ կարևոր են այդպիսի գրական խիզախումները:

ԱՅ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը հեռուստակապով շնորհավորել է անվանի արծակագրին հոբելյանի առթիվ:
«Հայ գրականության նվիրյալ. ես այսպես կանվանեի արծակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ Լևոն Աղյանին:
Լևոն Աղյանը գրական-հասարակական գործունեությունը ծավալել է Բաքու քաղաքում, այդ բազմազգ միջավայրում, բայց միշտ մնացել է ժամանակի ճշմարիտ տարեգիրը:
Հայրենիքում և հայրենիքից դուրս նա նույն սրտացավ հայն է, նույն ընդվզող մարտիկը, հրաշք գործող գեղագետը: Մի առիթով գրողն ինքը խոստովանել է, որ իր գրքերը մի մեծ կենսապատմի մասեր են: Ու երբ մենք ընթերցում ենք վերնագրերը, իսկապես դա տպավորություն է իր սասածի. «Կյանքի ճանապարհին», «Յեռավոր լեռներ», «Իմ երկրի մարդիկ», «Տունը գյուղի ծայրին», «Ձորում աղմկում է գետը», «Աշնանային ցրտեր», «Սոռնակները»: Կցանկանալի առանձնացնել Լևոն Աղյանի հասարակական գործունեությունը, ընդգծել

ԳՐՈՂ, ՈՐԻ ՍԻՐՏԸ ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Պարտադիր է, որ գրողն ապրի իր ծննդավայրում, որպեսզի համարվի իրեն ծնող ժողովրդի գավակը: Հայ գրողի պարագայում դա երևի պարտադիր չէ, որովհետև ճակատագրի դառը քմահաճույքով զրջի շատ մշակներ և, առհասարակ, մշակույթի անվանի գործիչներ ապրել ու ստեղծագործել են արտերկրում. Ուիլյամ Սարրոյան, Վահե Քաչա, Փիթեր Սուրյան... Այդպես հարյուրավորների կարելի է թվարկել:
Խորհրդային տարիներին ևս շատ գրողներ ապրում էին հսկայածավալ երկրի տարբեր քաղաքներում, և եթե անգամ գրում էին ոչ մայրենի լեզվով (հիմնականում՝ ռուսերեն), միևնույն է, էությանը հայ էին մնում:
Այդպիսի գրող է նաև Լևոն Աղյանը, որն ավելի քան վեց տասնամյակ առաջ դուրս գալով հայրենի Չլդրան գյուղից, բարձրագույն կրթություն ստացավ ու գրական կարիերան ձևավորեց Բաքվում: Տարիներ անց, երբ Արցախում թափ առավ ազգային-ազատագրական շարժումը, ինչպես բազմահազար այլ բաքվաբնակ հայերի, նրան նույնպես դուրս վտարեցին գեհեմի վերածված «իստերնացիոնալ» Բաքվից: Կարող էր, անշուշտ, Աղյանը վերադառնալ հայրենի Արցախ ու այստեղ ապրելով՝ ստեղծագործել, բայց ինչպես ասում են՝ ընտրությունը գրողին էր, և նա նախընտրեց Սանկտ Պետերբուրգը, որտեղ էլ ներկայումս բնակվում է:
Խորհրդային Ադրբեջանում կերտված հայ գրականությունը որոշ բացառություններով դուրս է գտնվել հայ գրաքննադատության ուշադրությունից կամ էլ պատշաճ չի տեսաբանվել:

Կարելի է մտածել, որ աղբյուրահայ (սա խորհրդային տերմին է) գրողները չունեին համապատասխան գրական ծիր, որպեսզի արժանանային հայրենի գրաքննադատների ուշադրությանը, սակայն այն գրական ժառանգությունը, որ ստեղծվել է Ադրբեջանում ԽՍՀՄ գոյության տարիներին, կարծում ենք, շահագրգիռ ուսումնասիրության կարիք ունի: Խնդիրը միայն գեղագիտական չափումներով չբանաձևենք, այլև աղբյուրահայ հանրության նկատմամբ սոցիալ-ազգային խտրականության համատեքստում, որ տասնյակ տարիներ լատենտ ձևով կիրառվում էր ազերիների հանրապետությունում:
Լևոն Աղյանն այս ամենի լուռ կրողն էր, երբ ապրում էր Բաքվում: Նա կարողացավ ստեղծել գրական գործեր, որոնք թեպետ սոցիալիստական ռեալիզմի ոգով էին գրված, բայց և ունեին ապրումակցման տեսանկյունի կարողություն: Նրա «Այն հեռավոր ամռանը» և «Կորսված բարդիներ» գրքերը հիրավի՝ նոր երևույթ էին գրական մարզիմալ միջավայրում, որով էլ աղյանական տաղանդն առանձնացավ մյուսներից և իր ստեղծած ժառանգությամբ կարողացավ համեստ տեղ ապահովել հայ գրականության անդամատանում:
Հատկանշական է, որ Ռուսաստան տեղափոխվելուց հետո Լևոն Աղյանը դարձյալ ուժ գտավ տարիքին ոչ այնքան հարիր ակտիվությամբ ստեղծագործելու, մանավանդ որ բռնատեղահանումը հաճախ մարդու միջից հանում է ապրումակցման էներգիան: Նա Սանկտ Պետերբուրգում գրեց համրահայտ «Յեռացող եզերք» վեպը,

որն, ի դեպ, իր առաջին հրատարակությունն ունեցավ Ստեփանակերտում: Այս վեպի գաղափարական բովանդակությունը դժվար է միանշանակ գնահատել, ամենից առաջ տարբեր ազգության ներկայացուցիչ հանդիսացող գույգի սիրո մատուրալությամբ: Փաստացի հակամարտության մեջ գտնվող հայ երիտասարդի ու աղբյուրահայ դրաման բազմաշերտ է թե՛ անձնական ողբերգության և թե՛ ցեղասպանական իրադարձությունների համապատկերին: Հեղինակային լուծումը տվյալ դեպքում ավելի շատ զգայական, քան էքզիստենցիալ մատուցում ունի, թեև իրադարձություններն առավելապես վավերագրական նշանակությամբ են ընդգծվում:
Միևնույն ժամանակ հարկ է խոստովանել, որ նորոյա գրականությունը Բաքվի արյունալի դեպքերին նմանօրինակ գեղարվեստական արծագանք չունի, կամ գուցե ճիշտ կլինի ասել՝ չունի համարժեք արտացոլում, և այս առումով Աղյանին իրավամբ կարելի է դասել ընթերցվող հեղինակների շարքում, ինչը խրախուսելի փաստ է:
Վերջերս 80-ամյա հոբելյանի առթիվ, Լևոն Աղյանն արժանացել է Արցախի Հանրապետության պետական պարգևի: Սա վստահի յուրօրինակ արժևորում է, ի հավաստումն այն բանի, որ հայրենիքում արժանի գավակների հիրավի՝ գնահատում են՝ որտեղ էլ նրանք ապրելիս լինեն:
Ասենք՝ շնորհավոր ու մաղթենք արևշատություն:

Կիմ ՎԱՐԻՆԵՆԱՆ
գրող, բ.գ.թ.

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՆ՝ ԱՆՑՆԵԼՈՎ ԲՈԼՈՐ ՔԱՅԼԵՐԸ

1 - Գանք չափորոշիչները մշակող փորձագիտական խմբին: Ովքե՞ր պետք է ընդգրկված լինեն նրանում:

- Պետք է լինեն մասնագետներ՝ յուրաքանչյուրն ուրույն մտածելակերպով: Լինի նաև պետական պաշտոնյան, որը ելնում է պետության դիրքորոշումից: Ռազմավարությունը տասնյակ տարիների համար է, թե ինչպիսի պետություն, ինչ քաղաքացի ենք ուզում, և ինչ կրթություն պետք է լինի: Այն կախված չպետք է լինի անձերից, թե ով է նախագահը, վարչապետը կամ նախարարը: Աշխատանքային խմբի ստեղծածը դրվում է քննարկման: Այն սկզբում պետք է ուղարկել շահագրգիռ կազմակերպություններին և նշել ժամկետ քննարկելու ու վերջում գրավոր եզրակացություն տալու համար:

Բայց երբ միանգամից դրվում է համացանցում, ստացվում է, որ ինքնահոսի մատնված է. ով ուզում է, նա է մասնակցում: Այնինչ փաստաթուղթը պետք է հասցեական ուղարկվի շահագրգիռ կառույցներին: Այնուհետև աշխատանքային խումբը ստացված բոլոր կարծիքներն ու առաջարկությունները քննարկում է մասնագետների հետ: Բոլորը պետք է մտածեն, որ դրանց հեղինակներն իրենցից ոչ պակաս խելացի են: Քննարկելուց հետո թողնվում են այն կետերը, որոնց երկու կողմերն էլ համամիտ են: Եթե ինչ-որ դրույթ չի անցնում, կողմերից մեկը իրենց է պնդում է, հետագայում, երբ կազմվի ամբողջ ծրագիրը և դրվի համացանցում, այդ չհամաձայնեցված կարծիքներն էլ պետք է մի քանի տարբերակներով դրվեն: Առաջարկվող մտքին կարող է մեկը համաձայն չլինել, բայց ընդհանուր ծավալի մեջ դրական լինի: Փաստաթուղթը համացանցում հանրային քննարկման պետք է դրվի այդ քայլերից հետո միայն:

- Աշխատանքային խումբը փաստորեն մեկ քայլ բացառել է: Պիտի հետ դառնա չարած քայլն անելը՞ և Որի՞ց սկսելու:

- Ոչ մի աշխատանք անարդյունք չէ. բացասական արդյունքն էլ արդյունք է, արդեն իմանում ես ինչ չափի անես, այսինքն՝ արդեն ունես մի բազա: Խումբը տվյալ դեպքում պետք է սկսի երկրորդ քայլից՝ լայն մասնագետների հետ քննարկումից, դուրս քաշի նրանց միջից բոլոր գաղափարները: Արձագանքները շատ տեղին են, չեն ասում՝ ճիշտ են: Գիշտ են այն առումով, թե ինչու իրենց՝ մասնագետների հետ չեն քննարկվել: Բայց որևէ մեկը թող կուրծք չծծի, թե ինքն էր ճիշտը և հաղթեց: Այս գործում հաղթողներ և պարտվողներ չպետք է լինեն. չէ՞ որ բոլորը ծառայում են նույն նպատակին՝ մեր երկրի մատաղ սերնդին: Այստեղ անձերի, կուսակցությունների, կազմակերպությունների հարց չպետք է լինի, այլ՝ մասնագետի: Գիշտ է ասված, որ ճշմարտությունը ծնվում է վեճի մեջ: Յուրաքանչյուրն ունի իր ճշմարտացիությունը, բայց ճշմարտությունը մեկն է լինում:

Դա էլ պետք է հասկանալ, որ ոչ մի ժամանակ ոչ մի ծրագիր բոլորի կողմից չի ընդունվելու, պետք է համաձայնեցվի մեծամասնության հետ: Իսկ դրա համար քննարկումները պետք է կատարվեն բոլոր քայլերն անցնելով:

Ընդհանրապես, եթե ռազմավարությունը և մարտավարությունը ճիշտ են մշակվում, մնացածն ինքն իրեն գալիս է: Հիմքը երբ ճիշտ է դրված, շղթայի բոլոր օղակներն իրենց տեղն են ընկնում, տեխնիկայի հարց է: Առարկայական չափորոշիչների հիման վրա ծրագրերն են կազմվում, ապա՝ դասագրքերը: Վերջիններս կարող են տարբեր լինել, բայց պետք է համապատասխանեն պետական չափորոշիչներին:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ՈՐԱԿՅԱԼ ԵՎ ՀՄՈՒՑ ՄԱՍՆԱԳԵՏ ԴԱՏՐԱՍՏԵՆ Է

Մարտունու վարչիկ Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարանը հիմնադրվել է 1973 թվականին՝ որպես գյուղատնտեսական ուսումնարան: Տարիների ընթացքում կոչվել է պրոֆտեխուսումնարան, միջնակարգ պրոֆտեխուսումնարան, արհեստագործական ավագ դպրոց, իսկ 2010թ. օգոստոսի 12-ից՝ Վ.Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարան:

Վորոզ՝ «Վարսահարդար», «Նորոգող-վարորդ», «Տրակտորիստ մեքենավար» և «Սալիկապատող» որակավորումով: Ա.Մովսիսյանը միաժամանակ ընդգծեց, որ ընթացքի մեջ

թաթռչակ: 2020-2021 ուստարվա համար հուլիսի 1-ից սկսված է «Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում», «Տրանսպորտային միջոցների շահագործում և

րած գիտելիքներով և կրթությամբ այսօր գումար են վաստակում՝ հոգում իրենց ընտանիքների սոցիալ-կենցաղային կարիքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախը գյուղատնտեսական երկիր է, իսկ մեր շրջանում առկա են մեծ քանակությամբ խաղողի և այլ մրգատու ծառերի այգիներ, այս տարի ուսումնարանում ընդունելություն է կատարվում նաև «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտության համար: Դիմումները կընդունվեն մինչև օգոստոսի 31-ը»:



Անդրադառնալով կրթությանի շենքային պայմաններին և առկա խնդիրներին՝ Ա. Մովսիսյանը նշեց. «Շենքն ունի վերանորոգման, նյութատեխնիկական բազա՝ համալրման կարիք, իսկ բոլորովին վերջերս ձեռք ենք բերել Mercedes C 180 մակնիշի ավտոմեքենա, որը թույլ կտա գործնական պարապմունքները կազմակերպել առավել արդյունավետ: Լիստիկոս ենք, որ կգտնվենք կառավարության ուշադրության կենտրոնում, իսկ առկա խնդիրներն օր առաջ լուծում կստանան»:

Առուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ
ք. Մարտունի

Ստեղծման օրվանից մինչ այսօր ուսումնարանը թողարկել է հազարավոր շրջանավարտներ, որոնք իրենց նպաստն են բերել երկրի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման գործում:

է նոր ուսումնական տարվա ընդունելությունը. ուսումնարան կարող են ընդունվել հիմնական կրթությամբ պատանիներ և աղջիկներ՝ ուսման 3 տարի տևողությամբ. «Բացի մասնագիտական որակավորում ստանալուց, մեր սովորողները ստանում են նաև միջնակարգ կրթություն, որը հնարավորություն է տալիս նրանց հետագայում ուսումը շարունակել տարբեր բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Ուսումնառության տարիներին սովորողները ստանում են կր-

նորոգում», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտությունների համար դիմորդների ընդունելությունը: Մեր վարպետներն անում են ամեն հնարավորը՝ որակյալ և հմուտ մասնագետ պատրաստելու համար: Շրջկենտրոնում, ինչպես նաև համայնքներում ունենք բազում շրջանավարտներ, որոնք արհեստագործական ուսումնարանում ձեռք բե-

ՓՈԽՎԵԼ ԵՆ «ՇԱԽՄԱՏ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍՆՎԱՆԴԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

«Շախմատ» ուսումնական առարկան կղասավանդվի 2-4-րդ դասարաններում՝ շաբաթական երկու ժամով: Առարկայի չափորոշիչը կազմվել է գիտական ժամանակակից հետազոտությունների հիման վրա. սահմանվել են չափելի վերջնարդյունքներ: Երկրորդ դասարանում ծրագիրը բեռնաթափվել է. մարտավարական հնարքները և «Մատ թագուհիով» ու «Մատ մավակով» թեմաները տեղափոխվել են երրորդ դասարան: Երկրորդ դասարանի ծրագրում հիմնականում թողնվել են խաղային, մինի խաղային և շախմատային գործնական խաղերի թեմաները: Ներառվել են մեկբայլանի խնդիրների լուծման մրցույթներ (5 ժամ), մատային դիրքերի ստեղծում (5

ժամ), որտեղ սովորողն ինքն է ստեղծում մատային դիրք իրեն տրված խաղաքարերով: Նախատեսվում է, որ կուսուցանվեն խաղը վարելու հիմունքները, որը թույլ կտա սովորողին ավելի հմուտ լինել գործնական խաղերի ժամանակ:

Երրորդ դասարանում պարզեցվել է «Շախմատ» առարկայի ամբողջ ծրագիրը. ներառվել են մարտավարական հնարքներ, ռազմավարական թեմաներ, պրակտիկ դասերի համադրումը իրականացվել է տեսականի հետ փոխներգործում սերտ կապով: Թեմաներում ներառվել են նախագծային առաջադրանքներ, որոնք նախկինում չեն եղել: Փոխվել են մեթոդները. առաջադրանքները ոչ թե ուսուցիչը բացատրում է,

այլ ուղղորդում է աշակերտներին՝ բացահայտել դրանք: Շախմատային ռազմավարական դիրքերի ուսուցումն իրականացվում է քննարկումների, բանավեճերի միջոցով, որոնց նպատակն է զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը:

Չորրորդ դասարանի ծրագիրը նախատեսվում է անփոփոխ թողնել, քանի որ բեռնաթափվել էր 2019 թվականին: Այն փոփոխվել է մեթոդապես, մարտավարական հնարքներն իրականացվում են իրավիճակի գնահատման և վերլուծության հիման վրա սովորողին ուսուցչի տված ուղղորդող հարցերի միջոցով:

ՀՀ ԿԳՄ

ԵՐԵՆԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹՅԱՆ 15 ՈՍԿԵ ԴԱՏՎԻՐԱՆՆԵՐ ՄԵԾԱՆՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՓԻԼԻՍՈՓԱ ՄԱՐԻԱ ՄՈՆՏԵՍՈՐԻԻՅ

Իտալացի մեծանուն մանկավարժ Մարիա Մոնտեսորին այն չորս մանկավարժներից մեկն է (Ջ. Դյուլի, Գ. Կերշենշտեյներ, Ա.Մակարենկո), որը, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, մեծ ներդրում է ունեցել XX դարի մանկավարժական մտածողության ձևերի հաստատման հարցում:

- 3. Եթե երեխային հաճախ են գովում, նա սովորում է զննահատել:
- 4. Եթե երեխային վերաբերվում են թշնամաբար, նա սովորում է կռվել:
- 5. Եթե երեխայի հետ ազնիվ են, նա սովորում է արդար լինել:
- 6. Եթե երեխային հաճախ են ծաղրում, նա վախկոտ է լինում:
- 7. Եթե երեխան ապրում է ապահովության զգացումով, նա սովորում է հավատալ:
- 8. Եթե երեխային հաճախ են անարգում, նա սովորում է մեղավոր զգալ:
- 9. Եթե երեխային հաճախ են հավանություն տալիս, խրախուսում, նա սովորում է ինքն իրեն լավ վերաբերվել:

10. Եթե երեխայի նկատմամբ հաճախ են հանդուրժող լինում, նա սովորում է համբերատար լինել:

- 11. Եթե երեխային հաճախ են ուրախացնում, նա ինքնավստահություն է ձեռք բերում:
- 12. Եթե երեխան ապրում է համերաշխ մթնոլորտում և իրեն պիտանի է զգում, նա սովորում է սեր գտնել այս աշխարհում:
- 13. Երեխայի մասին վատ մի խոսեք ոչ նրա ներկայությամբ, ոչ առանց նրա:
- 14. Կենտրոնացեք երեխայի մեջ լավի զարգացմանն այնքան, որ վատի համար տեղ չմնա:
- 15. Միշտ լսեք և պատասխանեք Ձեզ դիմող երեխային:

Մոնտեսորին ստեղծել է մի մեթոդ, որի հիմնական սկզբունքն է՝ օգնիր ինձ գործել ինքնուրույն:

Ձեզ ենք ներկայացնում նրա կողմից ծնողների համար մշակված 15 պատվիրանը:

1. Երեխային ուսուցանում է իրեն շրջապատող միջավայրը:

ՕԳՈՍՏՈՍ - 1990

Յ 24-28.08. 1990թ.: «Խորհրդային Ղարաբաղ»-ում տպագրված է «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որը մեծ հետաքրքրությամբ ենք ուսումնասիրում ու տարածում: Օրագրի կցված է օգոստոսի 29-ի «Ավանգարդ»-ի համարը, որում ընթերցում են. «Օգոստոսի 25-ին մարդիկ թերթերի օրվա թարմ օրինակները ձեռքներին՝ շտապում էին դեպի Գերագույն խորհրդի նախագահության շենքի հրապարակը: Նրանցում զետեղված են «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, «ՀԽՍՀ օրենքը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության վերանվանվելու» «Հայաստանի պետական դրոշի մասին» ՀՀ օրենքները: Հողվածագիր Վանիկ Սանթրյանը գրում է. «Կարծես երազի մեջ լինեմ. այս դրոշը միշտ կրել եմ, խորհրդային կարգերի ժամանակ երկու անգամ եմ եռագույնը այս շենքի վրա բարձրացրել: Երկու անգամ էլ հանել են: Գիշերը դրել եմ, ցերեկը եկել են հանել, իրենցը դրել»: Հրապարակը լցված է մարդկանցով: Շենքի մուտքի առջև երևում են Հայաստանի ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Հայաստանի ԳԽ նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքյանը, Հայաստանի ԳԽ նախագահի առաջին տեղակալ Գագիկ Հարությունյանը, ԳԽ քարտուղար Արա Սահակյանը, հայոց պառլամենտի պատգամավորները: Շարքերը թնդում են՝ կեցցե՛, կեցցե՛, պայքար, պայքար մինչև վերջ: Հրապարակով մեկ հնչում է «Հայր մեր»-ը: Իսկ դրոշը բարձրացնելու պահին դրան փոխարինում է «Մեր հայրենիք»-ը: Կառավարական շենքի վրա ծածկվում է եռագույնը: Խոսափողին է մոտենում հանրապետության ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղայանը: Եվ հրապարակով մեկ ու նրա բազմության համերաշխ ընկերակցությամբ թնդում է «Ջարթիր, լաո, սընճիմ քըզի» երգը:

Սիւսիսի երգում են, պարում երևանցիները, այստեղ հյուր գտնվող մեր հեռավոր հայրենակիցները, իսկ մենք էլ՝ արցախահայերս, այսքանը դիտելով ու թերթերում ընթերցելով՝ հրճվում-ուրախանում ենք՝ մի պահ մոռանալով այն դժվարությունները, որ տիրում են մեզ մոտ:

30.08. 1990թ.: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հրապարակված է «Բաց նամակ Մ. Ս. Գորբաչովին», որի տակ դրված են կուսակցական, պետական, հասարակական կազմակերպությունների և գիտամշակութային 375 գործիչների ստորագրություններ: Բաց նամակում Գորբաչովին մեղադրում են անկարողության մեջ, և օրինական հարց է ծագում. ի՞նչ են ուզում Կենտրոնն ու Արբեշյանը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունից, որը մեր հասարակության մեջ տեղի ունեցող պրոցեսների պայմաններում քաղաքական ու տնտեսական ազատության է ձգտում որպես միութենական ֆեդերացիայի լիիրավ սուբյեկտ: Ղարաբաղի արդար պայքարին միաժամանակ սատար է կանգնում հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը իր 1990թ. օգոստոսի 28-ի կոնդակով: Եվ այսպես, դարձյալ մեծ հույսերով սպասում ենք մեր հարցի դրական լուծմանը:

Մառլեն ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր
աշխատող,
անհպական թոշակառու

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԵՎ ՏՊԱԿՈՐԻՉ STARMUS VI Է ԽՈՍՏԱՆՈՒՄ

Գիտության և արվեստի աշխարհահռչակ STARMUS փառատոնը 2021թ. սեպտեմբերի 6-ից 11-ը Երեւանում կմիավորի համաշխարհային մակարդակի գիտնականների, արվեստագետների և տիեզերագնացների:

Կազմակերպիչները վերջերս կայացած



առցանց միջոցառման ընթացքում պաշտոնապես հայտարարել են փառատոնը Հայաստանում անցկացնելու մասին՝ նշելով, որ STARMUS VI-ը նվիրված կլինի Մարսին՝ խորհրդային MARS 3-ից եւ ամերիկյան MARINER 9-ից մինչեւ NASA-ի տպավորիչ առաքելություններն ու Space X-ի հավակնոտ վայրէջքի պլաններ:

Փառատոնի համահիմնադիր, տնօրեն եւ խորհրդի անդամ Գարիկ Իսրայելյանն ասել է, որ STARMUS VI-ը կլինի մարդկության ապագայի մասին փառատոն, որը կքննարկի՝ ինչու է կարելի Մարս մոլորակը եւ գիտության ու տեխնոլոգիաների ինչ գարգացման կրթի դրա ուսումնասիրությունը:

6-րդ STARMUS փառատոնը Հայաստան կերի աշխարհահռչակ գիտնականների, արվեստագետների եւ տիեզերագնացների՝ կիսվելու բեկումնային բացահայտումներով, ամրադարձանալու հրատապ հարցերի եւ ոգեշնչելու նոր սերնդի գիտնականներին ու հետազոտողներին:

Մեդիամաքսը գրի է առել առցանց միջոցառման բանախոսների ուշագրավ մտքերը:

ՄԱՐՍԻ ՏԱՐԻՆ

Գարիկ Իսրայելյանը 2021 թվականն անվանել է Մարսի տարի՝ նշելով, որ 2020թ. ամռան աշխարհի երեք տիեզերական գործակալություններ պլանավորում են մեկնարկել դեպի Մարս առաջին առաքելությունները, որոնք այդ մոլորակ կժամանեն 2021 թվականին:

«Մարս մոլորակի հետազոտության վերջին արդյունքները մեզ կհասնեն հենց փառատոնի ժամանակ, ինչը շատ հետաքրքիր երևույթ է: Մարսի տարվա մեջ ենք գտնվելու, վստահ եմ, որ չափազանց հետաքրքիր փառատոն կունենանք՝ նվիրված դեպի Կարմիր մոլորակ խորհրդային MARS 3-ի ու NASA-ի MARINER 9-ի առաքելությունների 50-ամյակին: Վստահ եմ, որ հաջորդ 10-ամյակը նվիրված է լինելու Մարս մոլորակի լուրջ հետազոտություններին, եւ դրանք իրենց մեջ ներառում են տարբեր բնագավառներ՝ բիոքիմիա, աստղաֆիզիկա, երկրաբանություն եւ այլն», - ասել է Գարիկ Իսրայելյանը:

Նա ասել է, որ շուտով սկսելու են աշխատել փառատոնի ծրագրի վրա եւ վստահություն հայտնել, որ այն լինելու է լավագույնը STARMUS-ի պատմության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԵԿՈՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը STARMUS VI փառատոնը հյուրընկալելու է մեծ պատասխանատվությամբ, ոգեւորությամբ եւ ակնկալիքներով:

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, որը երկու տարի առաջ Ցյուրիխում STARMUS V-ի բացման արարողության ժամանակ

իր ելույթում փառատոնը հրավիրել էր Հայաստան, վստահություն է հայտնել, որ Երեւանյան փառատոնն առանձնահատուկ է լինելու:

«Շատ ուրախ կլինեմք, եթե Հայաստան այցելեն Նոբելյան մրցանակակիրներ, որոնք այդ մեկ շաբաթվա ընթացքում իրենց դասախոսություններով ոչ միայն նոր մտքեր ու գաղափարներ կհաղորդեն այցելուներին, այլեւ կոգեւորեն մեր գիտնականներին, փառատոնի այցելուներին, երիտասարդությանը: STARMUS-ը մեկ այլ նպատակ էլ ունի՝ կրթությունը, որը երիտասարդներին ուղղորդում է դեպի ապագա՝ գիտություն, տեխնոլոգիաներ: Այդ ապագան նաեւ այն երազն է, որ Հայաստանը կարող է մասնակից լինել միջազգային ամենամեծ ծրագրերի՝ ընդհուպ մինչեւ

Մարս այցելությանը: Մեր երկրի հաջողությունը ապագայում սերտ կերպով կապված է լինելու նոր տեխնոլոգիաների հետ», - ասել է Հայաստանի նախագահը:

Նա ցանկություն է հայտնել, որ հայաստանյան փառատոնը շատ սերտ կապված լինի 21-րդ դարի առաջնային խնդիրների, մասնավորապես՝ արհեստական բանականության հետ, բանի որ առանց դրա չի կարող լինել նոր գիտություն, կրթություն, մշակույթ,



երաժշտություն:

«Շատ հպարտ եմ լսելու գիտության, արվեստի եւ տեխնոլոգիայի գարգացման մասին այդպիսի շեշտադրումներ Հայաստանի նախագահից: Ես վստահ եմ, որ փառատոնի աշխատանքներում հնարավոր կլինի նաեւ հայկական սփյուռքը ներգրավել եւ ի դեմս սփյուռքի ներկայացուցիչների՝ ունենալ փառատոնի դեպի ամենաաշխատասեր երկրներում», - արձագանքել է Գարիկ Իսրայելյանը:

Նա ասել է, որ իր համար հատկապես կարեւոր էր փառատոնը Հայաստան բերել. «Ես իմ կյանքի 50 տոկոսը Հայաստանում եմ անցկացրել, 50 տոկոսը՝ Հայաստանից դուրս: Ոգեշնչման ժամանակաշրջանը հենց Հայաստանում է եղել, բայց իմ մտքով ընդհանրապես չէր անցել, որ փառատոնը կարող է գալ Հայաստան, մինչեւ որ նախագահից ստացանք այդ հրավերը: Հիմա մենք ապրում ենք ուրիշ աշխարհում, որտեղ երիտասարդներին պետք է անընդհատ ոգեշնչել, միայն չոր կրթությունով՝ առանց բացատրելու, առանց ոգեշնչելու դժվար մեծ արդյունքներ տա»:

ՓԱՌԱՏՈՆԻՑ ԱՎԿԱԿԱԼԻՔՆԵՐԸ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Զարուբյանյանն ասել է, որ փառատոնի անցկացումը Հայաստանում հնարավորություն կընձեռնի նոր զարկ տալ գիտության, մշակույթի, կրթության ոլորտների զարգացմանը:

«Մի շարք ծրագրեր ունենք, որ պետք է իրականացվեն այս ընթացքում: Առանձնահատուկ է տպավորիչ միջոցառումներ ենք



նախատեսում, որոնք կմիավորեն արվեստն ու գիտությունը եւ հանրությանը նոր լույսով կներկայացնեն հոգեւոր եւ մտավոր արժեքները: Կարծում եմ, փառատոնը Հայաստանում նոր զարկ կտա հատկապես տեխնոլոգիական կրթության առումով: Փառատոնի անցկացումը Հայաստանում նոր հարթակներ, կամուրջներ կստեղծի համաշխարհային գիտատեխնիկական կենտրոնների հետ համագործակցության համար», - ասել է նախարարը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանն էլ ասել է, որ այսօր աշխարհն առաջ տանող ուժերը նորարարական, գիտատեխնոլոգիական ուղղություններն են:

«Գիտությամբ զբաղվելը նշանակում է լինել առաջնորդ, ավանգարդ եւ նորարար: Այս փառատոնը, միավորելով ռոք երաժշտությունն ու աստղաֆիզիկան, շատ ավելի հրապուրիչ է դարձնում գիտությամբ զբաղվելը հատկապես երիտասարդների համար: Տիեզերական տեխնոլոգիաներն այս պահին ամենաարագ զարգացող ճյուղերից մեկն են աշխարհում, եւ Հայաստանը մեծ առավելությունների դաշտ է ստեղծել մեր երկրում տիեզերական արդյունաբերության համար», - ասել է Հակոբ Արշակյանը՝ հավելելով, որ Հայաստանը հնարավորությունների երկիր է:

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ

STARMUS փառատոնի խորհրդի անդամ, ամերիկացի աստղագետ Ջիլ Տարտերը առցանց միջոցառման ժամանակ ասել է, որ ամհամբեր սպասում է 2021թ. սեպտեմբերին Հայաստանում փառատոնի անցկացմանը եւ հիշել է 50 տարի առաջ Բյուրականի աստղադիտարանում կայացած միջոցառման մասին: «Ինձ համար՝ որպես անձնավորության,



որը փորձում է երկրագնդից անդին կյանք հայտնաբերել, այդ վայրն ու տարեթիվը շատ առանձնահատուկ նշանակություն ունի: 2021թ. սեպտեմբերին կլրանա 50 տարին, երբ 1971թ. սեպտեմբերին կայացավ ԱՄՆ-ԽՍՀՄ առաջին համատեղ խորհրդաժողովը՝ նվիրված տիեզերական այլմոլորակային ուսումնասիրություններին եւ այդ խորհրդաժողովը անցկացվեց Բյուրականի աստղադիտարանում: Նույնիսկ շաբաթն է համընկել: 50 տարի առաջ ես մագիստրատուրայի ուսանող էի եւ չկարողացա գալ այդ խորհրդաժողովին, եւ հիմա անձնապես լիահույս եմ, որ կգամ եւ

կկարողանամ ինքս ճանաչել աստղադիտարանը, որտեղ այդ պատմական միջոցառումն է տեղի ունեցել, եւ ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը սկսեցին համագործակցել», - ասել է Ջիլ Տարտերը:

Նա հույս է հայտնել, որ փառատոնը շատ ակտիվ ծրագրի կունենա եւ հնարավորինս մեծ թվով գլոբալ մտածողությամբ մարդկանց կմիավորի աշխարհը փոխելու հնարավորության շուրջ:

Փառատոնի խորհրդական, շվեյցարացի աստղագետ, Նոբելյան մրցանակակիր Միշել Մայորը, որը մի քանի անգամ եղել է Հայաստանում եւ արժանացել է Վիկտոր Դանբարձույանի անվան մրցանակի, Հայաստանում փառատոնի անցկացումը ֆանտաստիկ է համարել:

«Հայաստանը շատ գեղեցիկ երկիր է, որն ունի հարուստ մշակույթ եւ հազարավոր տարիների պատմություն, վանքեր, եկեղեցիներ, համեղ խոհանոց: Ես շատ գեղեցիկ վայրերում եմ եղել եւ շատ եմ սիրում Հայաստանը», - ասել է Միշել Մայորը՝ փառատոնի մասնակիցներին խորհուրդ տալով անպայման այցելել ժայռի եզրին գտնվող Տաթևի վանք:

Փառատոնի խորհրդի անդամ, Astronomy ամսագրի գլխավոր խմբագիր Դեվիդ Այբերը նկատել է, որ այժմ աստղագիտությունն իր ոսկեդարն է ապրում, զարգացումները սրընթաց են: Նա ասել է, որ շարունակելով իրենց գործունեությունը, տարածելու են աստղագիտության նկատմամբ իրենց մեծ սերը հանրության լայն շրջաններում:

Այբերը նաեւ նշել է, որ Astronomy ամսագիրը միլիոնավոր լսարաններ ունի եւ ասել է. «Մենք լիահույս ենք, որ մեր լսարանը ոգեւորված կհետեւի հայաստանյան փառատոնի ընթացքին եւ յուրահատուկ միջոցառումներին: Հույս ունենք, որ կկարողանանք դիտակների միջոցով ներկայացնել Հայաստանի երկինքը, այս երկրի յուրահատուկ աստղագիտական ժառանգությունը, գիտության հարուստ պատմությունը»:

2011 թվականին Կանադյան կղզիներում արդեն շուրջ 20 տարի բնակվող հայ աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանի նախաձեռնությամբ Տեներիֆեում կազմակերպվեց STARMUS միջազգային փառատոնը, որը նվիրված էր Յուրի Գագարինի՝ տիեզերք կատարած առաջին թռիչքի 50-ամյակին: Հետագայում այն կազմակերպվեց եւս չորս անգամ, այդ թվում՝ Նորվեգիայում ու Շվեյցարիայում՝ դառնալով գիտական ու երաժշտական վառ իրադարձություն եւ ներգրավելով աշխարհահռչակ գիտնականների, տիեզերագնացների, Նոբելյան մրցանակի դափնեկիրների:

STARMUS-ի խորհրդատվական խորհուրդը 6-րդ փառատոնի՝ արվեստի եւ երաժշտության ոլորտի խոսնակների անունները կհայտարարի ավելի ուշ՝ այս տարի: Փառատոնի հաստատված խոսնակներն են Նոբելյան մրցանակակիր գիտնականներ Էդվարդ Մոզերն ու Միշել Մայորը, Apollo-16-ի Լուսնագնաց Չարլզ Դյուկը, CRISPR գեների խմբագրման տեխնոլոգիայի համահեղինակ Եմանուել Շարպանտիերն ու «iPod-ի հայր» եւ NEST-ի հիմնադիր Թոմի Ֆադելը: Առավել մանրամասն տեղեկատվության համար այցելեք www.starmus.com:

Մարի ԹԱՐՅԱՆ

«Լուսարար»-ի կողմից.- Մեր ընթերցողներին հիշեցնեմք, որ 2012թ. սեպտեմբերի 16-ին Արցախում կազմակերպվել էր աննախադեպ մի գիտաժողով՝ «Մարդը և տիեզերքը» թեմայով՝ նվիրված Լուսնի վրա առաջինը ոտք դրած մարդու՝ Նիլ Արմսթրոնգի հիշատակին: Միջոցառման նախաձեռնողներից աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանը Արցախ էր բերել տիեզերագնացներ Չարլզ Դյուկին, Կլոդ Նիկոլեին, որոնք հանդես են եկել հետաքրքիր դասախոսություններով: Հուսով ենք՝ STARMUS VI-ի շրջանակում էլի բախտ կունենանք Արցախում հանդիպել գիտության և մշակույթի նշանավոր մարդկանց:

ՆԵՏԱԲԵՐՈՒԱԶԱՐԺ

ՆԵՏԱԲԵՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՄԵՆ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Մաթեմատիկան այն գործիքն է, որի օգնությամբ մարդ հասկանում և իրեն է ենթարկում շրջակա աշխարհը: Մաթեմատիկայում հայտնագործություն կատարելու համար այն պետք է սիրել այնպես, ինչպես սիրել է յուրաքանչյուր մեծագույն մաթեմատիկոս: Շատերը մտածում են, որ մաթեմատիկոսները խիստ և հոռետես մարդիկ են: Իրականում այդպես չէ: Նրանցից շատերը տաղանդավոր են ոչ միայն գիտության մեջ, այլ նաև մշակույթի տարբեր բնագավառներում: Շատերը հայտնվել են հետաքրքրաշարժ պատմություններում:

ԼԵՆԱՐԴ ԷՅԼԵՐ



(1707-1783)

Էյլերը պատկանում է բոլոր ժամանակների համառելի մաթեմատիկոսների թվին: Ծնվել է Շվեյցարիայի Բազել քաղաքում: Մագիստրոսի կոչում ստացել է 16 տարեկան հասակում: Գրել է ավելի քան 800 աշխատություն: Պատմում են, որ Էյլերը չէր սիրում թատրոնը, բայց եթե գնում էր թատրոն կնոջ խնդրանքով, ապա որպեսզի չձանձրանա, այդ ընթացքում, մտքում կատարում էր բարդ, երկար հաշվարկներ մաթեմատիկայի որևէ բաժնից:

Ակադեմիկոս Պ.Պեկարսկի.«Էյլերն ունեցել է մեծ մշակույթ՝ չցուցադրել յուր գիտնական լինելը, թաքցնել իր առավելությունները և լինել յուրաքանչյուրի և բոլորի մակարդակին»:

ՍՈՖԻԱ ՎԱՍԻԼԵՎՆԱ ԿՈՎԱԼԵՎՍԿԱՅԱ

Սոֆիան իր մասին գրում է. «Ամբողջ կյանքում այնպես էլ չկարողացա հասկանալ՝ որն է մի շատ սիրուն. մաթեմատիկա՞ն, թե՞ գրականությունը»: Որպեսզի հնարավորություն ստանա զբաղվել գիտությամբ, ստիպված էր ծնակերպել կեղծ ամուսնություն և մեկնել Ռուսաստանից: 1870թ. Կովալևսկայայի ընտանիքը մեկնում է Բեռլին, որտեղ նա ծանոթանում է Կ. Վեյերշտրասի հետ: Որպեսզի ազատվի համառ Կովալևսկայայից, Վեյերշտրասը նրան հանձնարարում է լուծել մի շարք դժվարից խնդիրներ: Շատ կարճ ժամանակ հետո Կովալևսկայան ներկայանում է լուծված խնդիրներով: 1874թ. Կովալևսկայան ստանում է փիլիսոփայության դոկտորի կոչում:



(1850-1891)

ԱՆՂՐԵ ՄԱՐԻ ԱՄՊԵՐ



(1775-1836)

Ֆրանսիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս և քիմիկոս Ամպերը համարվում է էլեկտրադինամիկայի հիմնադիրը: Ամպերը Ֆրանսիայի, Ռուսաստանի և այլ երկիրների ԳԱ անդամ էր:

13 տարեկան հասակում իր մաթեմատիկական աշխատությունը ներկայացնում է Լիոնի ակադեմիա:

Ամպերն շատ անուշադիր էր: Մի անգամ իր դասն վրա կավիճով գրում է:

- Տանտերը տանը չէ, եկեք երեկոյան:

Ամպերն, վերադառնալով տուն, ընթերցում է դրան գրությունը և հեռանում: Տուն է վերադառնում ուշ երեկոյան:

ՆԻԿՈԼԱՅ ԻՎԱՆՈՎԻՉ ԼՈՒՎՁԵՎՍԿԻ

Գիմնագիտյուն, որտեղ սովորում էր Լոբաչևսկին, նրան չէին սիրում: Դասախոսներին դուր չէր գալիս իր մասին երազող, համառ և ազատամիտ երիտասարդը: Սակայն Լոբաչևսկին սովորում էր գերազանց: 1811թ. Լոբաչևսկին ստանում է մագստրոսի կոչում, 1822թ.՝ պրոֆեսորի: 1820-1825 թթ. ֆիզմաթ ֆակուլտետի դեկանն էր: 1827թ. նշանակվում է Կազանի համալսարանի ռեկ-



(1792-1856)

տոր և այն ղեկավարում է 19 տարի շարունակ:


Ն. Ի. Լոբաչևսկու գլխավոր ներդրումը նոր երկրաչափական համակարգի ստեղծումն է, այսպես կոչված, ոչ էվկլիդեսյան կամ Լոբաչևսկու երկրաչափության ստեղծումը: Իր աշխատությունը Լոբաչևսկին ներկայացրեց 1826թ. «Երկրաչափության հիմունքների համառոտ ներկայացումը զուգահեռների տեսության խիստ պայացուցմամբ» վերնագրով:

Լոբաչևսկու երկրաչափությունը լայն ճանաչում է ստանում նրա 100-ամյա հոբելյանի օրը՝ 1895 թ.: Ստեղծվում է Լոբաչևսկու անվան միջազգային մրցանակ, որը շնորհվում է երկրաչափությանը նվիրված արժանի աշխատանքի հեղինակին: Միաժամանակ կանգնեցվում է նրա հուշարձանը Կազանում՝ Վ. Ի. Ուլյանով-Լենինի անվան համալսարանի դիմաց, որտեղ սովորել են Վ. Ի. Ուլյանովը և Ն. Լոբաչևսկին:

Ն. Ի. Լոբաչևսկուն են պատկանում մի շարք հիմնարար աշխատություններ հանրահաշվից, մաթեմատիկական անալիզից, անվերջ զուգամետ շարքերի, ինտեգրալ հաշիվների, եռանկյունաչափական շարքերի մասին և այլն:

ԷՆՆԱՏ ԷՂՈՒՐԴ ԿՈՒՄԵՐՍԵՐ

Մաթեմատիկական անալիզի մի աշխատության համար համալսարանը Կումերին շնորհեց Գիտության դոկտորի աստիճան: Թվերի տեսության մեջ նա փորձել է ապացուցել Ֆերմայի թեորեմը: Սակայն դա նրան չի հաջողվել, բայց փոխարենը հայտնագործել է իդեալական թվերը և նկարագրել նրանց ոչ սովորական հատկությունները:



(1810-1893)

Մինչև 1841 թ. դասավանդում էր մաթեմատիկա բարձրագույն գիմնազիայում: Այս ժամանակաշրջանում ստեղծում է համաշխարհային ճանաչում ունեցող հիպեր երկրաչափական շարքեր, որի շնորհիվ 1839թ. դառնում է Բեռլինի գիտությունների ակադեմիայի անդամ:

Գերմանացի մաթեմատիկոս Կումերը, լինելով թվերի տեսության խոշոր մասնագետ, համերաշխ չէր թվաբանության հետ:

Մի անգամ ուսանողների հետ պարապմունքի ժամանակ պետք էր բազմապատկել 7 և 9 թվերը: «7 անգամ 9-ը, - սկսեց Կումերը,- կլինի ... 61, հուշեց ուսանողներից մեկը: Կումերը գրատախտակին գրեց 61: «Պարոն, բայց դա կլինի 66,- ասաց մեկ ուրիշը: «Պարոնայք, - ասաց Կումերը, ընտրեք 61 կամ 66 թվերից մեկը»:

ԳՈՏՓՐԻԴ ՎԻԼՋԵԼ ԼԱՅԲՆԻՑ



(1646-1716)

Գերմանացի փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս, գյուտարար, իրավաբան, լեզվաբան, Լոնդոնի Թագավորական պալատի և Ֆրանսիայի ԳԱ անդամ:

Գոտֆրիդի 14 տարին չէր լրացել, երբ նա զարմացրեց իր ուսուցիչներին՝ ցուցադրելով տաղանդ: Նա կարողանում էր գրել լատիներեն և հունարեն լեզուներով: 15 տարեկանում նա դարձավ Լայպցիգի համալսարանի ուսանող:

1708թ. վեճ ծագեց Լայբնիցի և Ի. Նյուտոնի միջև: Նյուտոնը նրան մեղադրում էր գրագողության մեջ:

Պյոտր Լ-ը աջակցում էր Լայբնիցին Պետերբուրգում Գիտությունների ակադեմիա ստեղծելու հարցում:

Բերենք Լայբնիցի փիլիսոփայական ասացվածքներից մի քանիսը:

- Սիրել՝ նշանակում է գտնել ուրիշի երջանկության մեջ քո սեփական երջանկությունը:

- Եթե երկրաչափությունը ևս հակասեր մեր ցանկություններին ու զգացմունքներին՝ որպես բարոյականություն, ապա մենք ևս կվիճեինք նրա դեմ և կխախտեինք բոլոր կանոնները՝ արհամարհելով նրա բոլոր ապացույցները:

ԱՎՈՒՍ ՖԵՐԴԻՆԱՆԴ ՄԵՔԻՈՒՍ




(1790-1868)

Պատմում են, որ Մեքիուսին իր թերթը հայտնագործելու հարցում օգնել է տնային հավաքարարուհին՝ սխալ կարելով ժապավենի ծայրերը: 1850թ. Լայպցիգի պրոֆեսոր Ավգուստ Ֆերդինանդ Մեքիուսին՝ հռչակավոր Կ. Ֆ. Գաուսի աշակերտին, ուղարկեցին Փարիզի գիտությունների ակադեմիա աշխատանքի, որտեղ նշված էր այդ թերթի մասին, որի պատասխանին Մեքիուսը սպասեց 7 տարի: Չստանալով արձագանք՝ Մեքիուսը այն հրատարակեց 1858թ.:


Մեքիուսի թերթն ունի մի կողմ և մեկ եզրային գիծ, օրինակ՝ ի տարբերություն գլանային մակերևույթի:

Այդ փաստը ապացուցում էր գերմանացի պրոֆեսորներին: Մեքիուսի թերթը(նկ. 1) ունի կիրառություն մեխանիկայում:


Եթե կտրենք Մեքիուսի թերթը նրա լայնության մեկ երրորդի չափով, ապա կստանանք իրար հազցված երկու



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

օղակներ (նկ. 2): Կողմնորոշված մակերևույթներ են գունդը, կոնը, գլանը, տորը և այլն:

Ոչ կողմնորոշված մակերևույթներ են Մեքիուսի թերթը (նկ.1), Կլայնի շիշը, (նկ. 3), պրոյեկտիվ հարթությունը և այլն:

Կողմնորոշված և ոչ կողմնորոշված մակերևույթներն անվերջ շատ են:

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրդՅ
մաթեմատիկայի
ամբիոնի դասախոս,
մ.գ.թ., դոցենտ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽՈՉՁՆԴՈՏՆԵՐԸ ՄԵՐ ՆԵՐՍՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ԻՐԱԿԱՆՈՒՄ ՈՉ ՄԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ. ԾՈՎԻՆԱՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ



Մարտարվեստների աշխարհում կիրկուլիզին կարատե դո մարտարվեստն առանձնանում է իր կոպիտ հնարներով, դաժան մարտական տեխնիկայով, կոշտ եւ ուժեղ հարվածային համակարգով: Թվում է, թե այդ մարտարվեստով զբաղվողները պետք է ունենան գոեհիկ բնավորություն, մինչդեռ մեր ունեցած պարբերական հարցազրույցներն այդ մարզածելի ներկայացուցիչների հետ ցույց են տալիս, որ կիրկուլիզին սկզբունքները շատ ավելի խորն են ու մեղմ, քան իր մարտական համակարգը: Ի՞նչ ընդհանրություն կարող է լինել կիրկուլիզին կարատեի եւ նուրբ ու համեստ աղջկա միջև: Եթե թվում է, թե ոչինչ չի կարող լինել, ուրեմն Արցախի «Օյամա» կիրկուլիզին կարատե դո ֆեդերացիայի մարզիկ Ծովինար ԱՎԱՆԵՍՅԱՆԻ հետ ունեցած մեր հարցազրույցը կօգնի շտկել թյուրիմացությունը:

Ծովինար Ավանեսյանն սկսել է կիրկուլիզին կարատե պարապել 12 տարեկանից: 2015թ. սկսել է պարապմունքները եւ դեռեւս մի քանի ամսվա պարապող՝ հռչակվել է 33 չեմպիոն: ԱՅ բազմակի չեմպիոն է: Հայաստանում կազմակերպվող առաջնություններին շարունակաբար մասնակցելով՝ դարձել է 33 բազմակի չեմպիոն: Հաղթանակներին հաջորդել են հայրենիքից դուրս կազմակերպվող մրցաշարերի մասնակցությունն ու կրկնակի հաղթանակները. Կրաստանում կայացած Կովկասի կիրկուլիզին կարատե դո առաջնության կրկնակի հաղթող է: Ծովինար Ավանեսյանը կիրկուլիզին կարատե մարզածելով պատանիների տարիքային խմբում մասնակցել է Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացած աշխարհի առաջնության, աշխարհի գավաթի առաջնության, Գերմանիայում ընթացած՝ Եվրոպայի առաջնության: 2019թ. 33 կիրկուլիզին կարատե դո առաջին միջազգային առաջնության հաղթող է:

պայմաններում հնարավոր է պահպանել մարզական կեցվածքը:

- Այս պայմաններում, իհարկե, դժվար է նույն գրաֆիկով մարզական վիճակի վրա աշխատելը, բայց մենք ձգտում ենք դա անել: Պարապում ենք օնլայն ռեժիմով, կատարում ենք մարզչի հրահանգները, աշխատում ինքնուրույն: Պատահում է, որ բացօթյա պարապմունքներ ենք ունենում:



Օգտագործում ենք կարանտինի կանոններին չհակասող միջոցները՝ մարզական լավ կեցվածքը չկորցնելու համար:

Փաստորեն ոչ մի խոչընդոտի առջև չեք նահանջում: Որտեղի՞ց այդքան կամքի ուժ ու նպատակասլացություն ձեր մեջ:

- Դեռեւս մինչեւ կիրկուլիզին դահլիճ ընդգրկվելս, իմ աշխարհայացքով ու մտածելակերպով փորձում էի տարբերվել «շաբլոնից»: Ինձ ճնշում էին այն կարծրատիպերը, որոնք սահմանափակում են աղջիկների ու կանանց ազատ ընտրությունը, հատկապես սպորտով պարապելու հարցում: Երբ մտա կիրկուլիզին աշխարհ, իմ աշխարհն էլ փոխվեց: Իմ մարզիչ՝ սեմպայ Արթուր Առուշանյանը դարձավ իմ ոգեւորության աղբյուրը: Նրանից շատ բան սովորեցի եւ շարունակում եմ սովորել: Այն հոգեբանական աշխատանքը, որը նա կատարում է իր սաների հետ, անգնահատելի դեր ունի ոչ միայն սպորտում, այլեւ կյանքում: Ամեն պահ գիտակցում եմ, որ հենց այնպես չեմ ապրում: Ամեն օրս օգտագործում եմ ինչ-որ նոր բան հասկանալու, զարգանալու համար: Կիրկուլիզին կարատեի պարապմունքները նպաստում են բնավորությունը կոփելուն, ինքը քեզ հաղթելուն: Բացի

դրանից օգտվում եմ օնլայն գրքերից, որոնք նույնպես օգնում են զարգանալ: Մարզչի կողմից կազմակերպվող բացօթյա արշավները՝ համադրված պարապմունքի հետ, դրական են ազդում մեր հոգեբանության վրա: Գալիս է մի պահ, երբ գիտակցում ես, որ խոչընդոտները մեր ներսում են, իսկ իրականում ոչ մի դժվարություն չկա: Այդպես սովորում ես ապրել լավատեսությամբ, ազատվում ես կարծրատիպերի ճնշումից, կարողանում ես հաճույք ստանալ ամենատվորական թվացող բաներից:

Ծովինար, առաջիկայում իրականացվելիք ի՞նչ նպատակներ ունեք:

- Իմ ամենամեծ նպատակը, որին ձգտում եմ, Արցախի կիրկուլիզին արժանի հետնորդ դառնալն է: Փորձում եմ այդ ճանապարհին խանգարող բոլոր հանգամանքները հաղթահարել եւ շարունակել ընտրած ուղիս իմ մարզչի նման: Տարեվերջին նախատեսվում է առաջնություն արտերկրում, բայց մանրամասները դեռեւս հայտնի չեն: Եթե ստացվի մասնակցել, դա կլինի իմ պատանեկան վերջին մրցույթը: Մարտ ամսում կլրանա տասնութ, կտեղափոխվեմ մեծահասակների տարիքային խումբ: Նպատակ ունեմ մարզչական գործունեություն ծավալել: Արդեն սկսել եմ վերապատրաստման առաջին քայլերս: Վառնայում մասնակցել եմ կիրկուլիզին կարատեի ամառային ճամբար-սեմինարի եւ ստացել որակավորման վկայական: Պետք է ավելի կատարելագործեմ մասնագիտական վարպետությունս: Պարապելու եմ թե՛ աղջիկների, թե՛ տղաների հետ: Մարզիկ լինելու համար խտրականություն չկա:

Կամ աղջիկներ, ովքեր կասկածում են մարզածելի ընտրության հարցում: Ի՞նչ խորհուրդ եք տալիս:

- Պետք է ընտրել այն, ինչն ավելի հոգեհարազատ է: Չպետք է մտածել, թե այս կամ այն մարզածելը համապատասխան չէ աղջկան: Ես ունեմ փոքր եղբայր, որն ավելի առաջ է սկսել պարապել կիրկուլիզին կարատե Արթուր Առուշանյանի մոտ: Եղբորս՝ Ալեքս Ավանեսյանի հետ սկսել եմ ես էլ գնալ, տեսնելով ու հավանելով այդ մարզածելը, ընդ որում, այդ ժամանակ միայն ես էի խմբում աղջիկ, սեմպայ Արթուրի համաձայնությամբ սկսեցի պարապել: Հիմա արդեն այնքան ուրախալի ու ողջունելի է, երբ ծնողները իրենց վեց տարեկան աղջիկ երեխաներին բերում են հենց կիրկուլիզին կարատե պարապելու համար: Ֆեդերացիան համալրվում է աղջիկներով: Մշակում ենք ծրագիր, որ առանձին խումբ ունենանք ֆիթնեսի կամ մարմնամարզության՝ կիրկուլիզին համակարգին հիմնված: Կասկածող աղջիկները հատկապես կարող են մոտենալ, մասնակցել, ընտրել իրենց համար որն է լավ: Մաղթում եմ, որ բոլորը լինեն երջանիկ, ազատ արտահայտեն իրենց զգացմունքները, միջանձնային հարաբերություններում լինեն միմյանց գնահատող: Ամեն ինչ կախված է մեզանից. կյանքում, գործում, սպորտում անկախ վայրից ցանկանում եմ հաջողություն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Շնորհավորանք ԿՈՉՄԱՆՆ ՈՒ ԳՈՐԾԻՆ ՇԱՎԱՏԱՐԻՄ



Արմեն Աշոտի Սողոմոնյան: Զինվորական կոչումը՝ կապիտան, մարդկային կոչումները՝ օրինակելի, վստահելի, պարկեշտ, արժանապատիվ...

Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի զինղեկն է՝ աշխատանքային պարտականությունների, ստանձնած գործին նվիրված, ուսուցչական և աշխատանքային հանրությունների կողմից հարգանք, համակրանք վաստակած, հավասարակշռված, մասնագիտությամբ խորապես տիրապետող անձնավորություն: Կարողանում է ուսանելի կերպով զուգահեռաբար համակարգել զինղեկի և քաղաքացիական պաշտպանության պատասխանատուի աշխատանքները, հեղինակ է քաղաքային մակարդակով բազմաթիվ բաց-ընդօրինակման դասերի և ռազմամարզական մրցումների: Իր վերաբերմունքով, տակտով ու զինվորականի փորձով կարողանում է իրականացնել պատշաճ ռազմահայրենասիրական դաստիարակություն սովորողների հետ: Բազմաթիվ են նրա կողմից կազմակերպված մրցումները, միջոցառումները, արիության դասերը և իր նախաձեռնությամբ ավանդույթ դարձած ամենամյա ռազմականացված տոնահանդեսները:

Դպրոցի զինղեկ Արմեն Սողոմոնյանը իր փորձով, կարողություններով ակտիվորեն է մասնակցում նաև քաղաքային և հանրապետական մակարդակներով կազմակերպվող միջոցառումներին:

50-ամյա հորեյլանի կապակցությամբ շնորհավորում և ամենից բարի մաղթանքներն ենք ցանկանում մեր հարգարժան զինղեկին: Երկար տարիների քաջառողջ կյանք, մորանոր ձեռքբերումներ, արևաշատություն, անձնական և անանձնական հաջողություններ Ձեզ, կապիտան Սողոմոնյան:

Ստեփ. Ա. Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ուսուցչական հանրույթ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆ ՆԱԽԱԳԴՐՈՋԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ՈՒՄՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԼՐԱՅՈՒՋԻՉ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև ներկայացնում ենք առկա լրացուցիչ թափուր տեղերի ցուցակը՝ ըստ դպրոցների և առարկաների:

- բ. Ստեփանակերտ
թիվ 4 հ/դ - ֆրանսերեն -12 դասաժամ
Ասկերանի շրջան
Խաչենի մ/դ - մաթեմատիկա -19 դասաժամ
Ակնաղբյուրի մ/դ - մաթեմատիկա -12 դասաժամ
Հաղորթի շրջան
Հաղորթի մ/դ - շախմատ -12 դասաժամ,
- հասարակագիտություն -11 դասաժամ
- երաժշտություն -6 դասաժամ
- ֆիզիկա -15 դասաժամ
Մարիամաձորի մ/դ - մաթեմատիկա 14 դասաժամ
Մարտակերտի շրջան
Թալիշի մ/դ - դասվար -0,72 հաստիք
Վաղուհասի մ/դ - ֆիզիկա -15 դասաժամ
Մարտունու շրջան
Հոլխոզաշենի մ/դ - կենսաբանություն -10 դասաժամ
Հաղորտու մ/դ - դասվար -14 դասաժամ
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Փաստաթղթերի ձևերն առկա են համապատասխան դպրոցներում: Մրցույթները տեղի կունենան 2020 թվականի օգոստոսի 24-28-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

